

Համաձայնագիր
ծրագրի իրականացման նպատակով կողմերի պարտավորությունների և մտադրությունների սահմանման և կատարման մասին

ք. Երևան

« _____ » _____ 2008 թ.,

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, /այսուհետ՝ Հիմնադրամ/, ի դեմս տնօրեն Թ.Բաբայանի, մի կողմից, և _____ **քաղաքի**, _____ **փողոցի** _____ **շենքի** _____ **բնակարանի (համա)սեփականատեր** _____ այսուհետ՝ Ընդունելի ընտանիք/, մյուս կողմից, հետագայում միասին՝ Կողմեր,

դեկլարավելով չ՛հ օրենքներով, այլ իրավական ակտերով, Հիմնադրամի կանոնադրությամբ և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ

Հիմնադրամի ու Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) միջև 28.04.2006թ-ին կնքված Գազի և ջեռուցման ծրագրի Դրամաշնորհի համաձայնագրով և Հայաստանի Հանրապետության ու ՄՁԸ միջև 20.07.2005թ կնքված Քաղաքային ջեռուցման ծրագրի վարկային համաձայնագրով նախատեսված միջոցները տրամադրվել են Հիմնադրամին որպես դրամաշնորհ, որոնք ուղղվելու են բազմաբնակարան շենքերում ապրող անապահով ընտանիքներին դրամաշնորհների տրամադրմանը՝ բարելավված ջեռուցման ծառայություններից օգտվելու համար, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

- 1.1 Սույնով Ընդունելի ընտանիքը տալիս է իր համաձայնությունը Հիմնադրամի կողմից իրականացվող Գազի և ջեռուցման ծրագրին ու Քաղաքային ջեռուցման ծրագրին (այսուհետ միասին՝ Ծրագիր) մասնակցելու և Ծրագրի ընթացակարգերով և սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունների իրականացման համար:
- 1.2 Ընդունելի ընտանիքը պարտավորվում է Ծրագրին մասնակցելու համար վճարել համաֆինանսավորման գումարներ.
 - տասնհինգ հազար դրամ (15000 դրամ)՝ բնական գազի միացման և վառարանի տրամադրման կամ ջեռուցման համակարգին միացնելու համար
 - 7500 դրամ՝ միայն վառարան տրամադրելու կամ անվտանգության պահանջներին չբավարարող վառարանը փոխարինելու համար:

Վճարումը պետք է կատարվի «**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան**» ՓԲԸ-ի 001-007855-010 հաշվին փոխանցում կատարելու միջոցով: Վճարման փաստաթղթում պարտադիր պետք է նշել վճարման նպատակը:

- 1.3 Ընդունելի ընտանիքի փոխարեն համաֆինանսավորման գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են տրամադրվել երրորդ անձանց կողմից /քաղաքապետարան, համատիրություն կամ այլ կազմակերպություն/: Եթե ընդունելի ընտանիքների փոխարեն համաֆինանսավորման գումարների մի մասը վճարվել է երրորդ անձի կողմից, ապա Ընդունելի ընտանիքը պարտավորվում է ապահովել այդ գումարի մնացյալ մասի վճարումը:
- 1.4 Հիմնադրամը բացում և կառավարում է Ծրագրում ընդգրկված ընտանիքի կողմից կամ նրա փոխարեն երրորդ անձանցից ստացված համաֆինանսավորման գումարների համար նախատեսված բանկային հաշիվը, ըստ անհրաժեշտության տրամադրում է այդ գումարների ստացման մասին փաստաթղթեր:
- 1.5 Ընդունելի ընտանիքի կամ նրա փոխարեն վճարում իրականացնող երրորդ անձանց կողմից համաֆինանսավորման գումարների ոչ լրիվ տրամադրման, ինչպես նաև Հիմնադրամից անկախ հանգամանքների ի հայտ գալու դեպքերում Հիմնադրամն ազատվում է սույն համաձայնագրով սահմանված իր պարտականությունների կատարումից և եթե մասնակիորեն իրականացվել են համաֆինանսավորման գումարների վճարումներ, ետ է վերադարձնում վճարված գումարը այն իրականացնող անձին:
- 1.6 Համաֆինանսավորման գումարները ստանալուց հետո Հիմնադրամն իրականացնում է ընտրված Ընդունելի ընտանիքի բնակարանի ներտնային գազասպառման համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծերի համաձայնեցման, ներառյալ ծխաօդատար համակարգի տեխնիկական վիճակի մասին ակտի տրամադրումը, այդ բնակարանը գազամատակարարման ցանցին (առևտրային հաշվառքի սարքին) միացման և գազօգտագործող սարքավորման (գազի վառարանի) հավաքակցման աշխատանքների կազմակերպումը օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.7 Հիմնադրամը ձեռք է բերել համաձայնություն «ՀԱՅՈՒՍՏԱՆԻ ԳԱԶԱՐԴ» ՓԲԸ հետ այն մասին, որ Ընդունելի Ընտանիքը չվճարի գազամատակարարման համար սահմանված կանխավճարը (առևտրային հաշվառքի սարքի տեղադրման համար):
- 1.8 Սույն համաձայնագրի 1.6 կետով նախատեսված աշխատանքների արդյունքը Հիմնադրամի կողմից որպես շնորհ տրամադրվում է Ընդունելի ընտանիքին, որի վերաբերյալ Ընտանիքի և Հիմնադրամի միջև կնքվում է համապատասխան փաստաթուղթ /այն համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը/: **Ընդունելի ընտանիքը պարտավոր է Շնորհ ստացած Գազի վառարանը օգտագործել ըստ իր նշանակության, չօտարել, չնվիրել, չհանձնել այլ անձանց օգտագործմանը:**
- 1.9 Ընդունելի ընտանիքը պարտավորվում է թույլատրել իր բնակարանում իրականացնել գազամատակարարման ցանցին (առևտրային հաշվառքի սարքին) միացման, ներառյալ ծխաօդատարի բացման, և գազօգտագործող սարքավորման (գազի վառարանի) հավաքակցման աշխատանքներ՝ ապահովելով այդ աշխատանքներն

իրականացնող կազմակերպություններին անհրաժեշտ աջակցություն, ինչպես նաև այդ կազմակերպությունների ներկայացուցիչների մուտքը իր բնակարան:

- 1.10 Ընդունելի ընտանիքը պարտավորվում է ապահովել Հիմնադրամի աշխատակիցների կամ նրա կողմից լիազորված անձանց մուտքը իր բնակարան Ծրագրի մոնիթորինգի նպատակով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աջակցություն մոնիթորինգի իրականացման աշխատանքներին:
- 1.11 Ընդունելի ընտանիքը պարտավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գազամատակարարող ընկերության հետ կնքել համապատասխան պայմանագրեր, գազամատակարարումից հետո սահմանված կարգով իրականացնել իր օգտագործած գազի դիմաց վճարումները:
- 1.12 Ընդունելի ընտանիքը պարտավորվում է անվտանգության պահանջներին չբավարարող վառարանը նորով փոխարինելու դեպքում, համապատասխան ձևով ոչնչացնել անվտանգության պահանջներին չբավարարող վառարանը:
- 1.13 Սույն Ծրագրի շրջանակներում մասնակցած և Շնորհի ստացած Ընդունելի ընտանիքը Ծրագրին երկրորդ անգամ մասնակցել չի կարող:
- 1.14 Սույն համաձայնագիրը ենթակա է պարտադիր կատարման Կողմերի կողմից և Կողմերը պարտավորվում են իրականացնել սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները:
- 1.15 Սույն համաձայնագրից բխող ցանկացած վեճ լուծվում է Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վիճելի հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.16 Սույն համաձայնագրի դրույթների ցանկացած փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:
- 1.17 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում, եթե իրականացվել են ներքոգրյալ բոլոր պայմանները.
 - Ընդունելի ընտանիքի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են Ծրագրի և սույն համաձայնագրով սահմանված պահանջներին և Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ Ընտանիքը ընդգրկվել է ծրագրում,
 - Ընդունելի ընտանիքի կողմից կամ նրա փոխարեն իրականացվել են համաֆինանսավորման գումարների վճարումները,
 - «ՀԱՅՈՒՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ-ի կողմից տրամադրվել է Ընդունելի ընտանիքի բնակարանի գազաֆիկացման և/կամ վառարանի տեղադրման հնարավորության վերաբերյալ համապատասխան տեխնիկական փաստաթուղթ /Տեխնիկական պայմաններ/
 - Հրշեջ անվտանգության ծառայություն իրականացնող կազմակերպության կողմից տրամադրվել է համապատասխան Ակտ
- 1.18 Սույն համաձայնագիրը կազմվում է հայերեն լեզվով, իրավագոր 2 օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

Քաղաքացի _____

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պոռչյան 1 նրք, 32

Հասցե՝ ՀՀ, _____ քաղաքի
_____ փ. ___ շենք _____ բն.

Հեռ.՝ 545-121

Անձնագիր No _____

Ֆաքս 545-121

տրված «___» _____ թ. _____ կողմից

Էլ փոստ՝ uhp@r2e2.am

Սոց. քարտ _____

Տնօրեն _____ /Թ.Բաբայան/

_____/_____
/ստորագրություն, անուն, ազգանուն/